

*Արձանագրություն թիվ 11*

*ԵՊՀ-ի քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,  
կայացած 2018թ հունիսի 25-ին*

Օրակարգում՝

1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկում:
2. «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցումների արդյունքների քննարկում:
3. Ուսումնական ծանրաբեռնվածությունների հաստատում:
4. Ընթացիկ հարցեր՝
  - ❖ Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի ընտրություն
  - ❖ Կուրատորական աշխատանքների քննարկում
  - ❖ Ուսումնական ձեռնարկների հարց

Նիստի նախագահ՝ պրոֆեսոր Ս.Վ. Ղոչիկյանը ներկայացրեց հերթական գիտխորհրդի օրակարգը: Նա նշեց, որ օրակարգից հանվում են «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցումների արդյունքների քննարկումը քնազի այդ հարցին անդրադարձել ենք նախորդ նիստում և ուսումնական ծանրաբեռնվածության հաստատումը, քանզի այն ամբողջական չէ: Այս հարցին կանդրադառնանք արձակուրդից անմիջապես հետո:

**Խորհրդի նախագահ, պրոֆեսոր Ս.Վ.Ղոչիկյան** - ամբիոնի վարիչները ներկայացնեն իրենց մոտ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները:

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ- պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյան- Ամբիոնում ավարտական աշխատանք է կատարել 8 ուսանող, նախնական պաշտպանությանը արդեն իսկ պարզ էր ամբողջ պատկերը՝ լավ պատրաստված էին և կատարել էին ավարտական աշխատանքների պայմաններին բավարարող աշխատանք: Ստացել են 20-միավոր 2 ուսանող, 19-միավոր 2 և 18- միավոր 4 ուսանող: Մագիստրոս Սևակ Գրիգորյանը ստացել է 20 միավոր և այսօր ունենք 2 հեռակա ուսումնամբ ուսանող, որոնց գնահատականները դեռևս չեն հայտարարվել:

Անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր – Ռ.Ս.Հարությունյան. մեզ մոտ նույնպես բարձր են գնահատվել աշխատանքները 20-1 ուսանող, 18-2 ուսանող և 17,16 միավորներ համապատասխանաբար 4 և 1 ուսանող:

Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ –Շ.Ա.Մարգարյան : Ես գոհ եմ ինչպես ավարտական աշխատանքների որակից, այնպես էլ գնահատականներից:

**Խորհրդի նախագահ- պրոֆեսոր Տ.Վ.Ղուչիկյան:** Այժմ անցնենք Ֆակուլտետի կուրատորական աշխատանքների քննարկմանը: Կուրատորական աշխատանք մենք ունենք միայն առաջին կուրսերում՝ ներկայացնելու նպատակով խոսքը տրվում է քիմիայի ֆակուլտետի դեկանի տեղակալ Ա.Բ.Մարտիրոսյանին: Ելույթ ունեցողը ներկայացրեց ֆակուլտետի ուսումնական խորհրդատուների հաշվետվությունների հիման վրա կատարված վերլուծությունը: Նշվեց, որ խորհրդատուները ներկայացրել են իրեց հաշվետվությունները, որտեղ տրված են նրանց կողմից կատարված աշխատանքները, առաջ եկած դժվարություններն ու հարցերը, ինչպես նաև առաջարկներն և լուծումները:

**Առաջարկվեց** - Դեկանի տեղակալ Արմեն Մարտիրոսյանը առաջարկեց ֆակուլտետի ուսումնական խորհրդատուների կատարած աշխատանքները գնահատել բավարար:

**Որոշեցին** – Բաց քվեարկությամբ ֆակուլտետի գիտական խորհուրդը ուսումնական խորհրդատուների կատարած աշխատանքները գնահատեց բավարար:

**Պրոֆեսոր Տ.Վ.Ղուչիկյան** - Օրակարգի հաջորդ հարցը՝ անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի անցկացման հարցը: Այդ պաշտոնի համար դիմել էին՝ պրոֆեսորներ Ռ.Ս.Հարությունյանը, Հ.Գ.Խաչատրյանը, դոցենտներ՝ Ա.Բ.Մարտիրոսյանը, Ռ.Պ.Մխիթարյանը, Լ.Ռ.Հարությունյանը: Սակայն նրանցից՝ Ռ.Ս.Հարությունյանը, Հ.Գ.Խաչատրյանը, Ռ.Պ.Մխիթարյանը ինքնաբացարկ են հայտարարել և այժմ մնացել են երկու թեկնածու. դոցենտներ՝ Ա.Բ.Մարտիրոսյանը և Լ.Ռ.Հարությունյանը:

Ելույթ ունեցան - նիստի նախագահ, քիմ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Տ.Վ.Ղուչիկյանը և մրցութային հանձնաժողովի նախագահ դոցենտ Ի.Լ.Ալեքսանյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի թափուր տեղի համար դիմել են անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի դոցենտ ք.գ.թ Լ.Ռ.Հարությունյանը և քիմիայի ֆակուլտետի փոխդեկան, դոցենտ Ա.Բ.Մար-

տիրյանը: Մրցույթին մասնակցող թեկնածուների գիտական կոչումը, աշխատանքային ստաժը և գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում են հայցվող պաշտոնի համար ներկայացվող պահանջներին: Նրանց թեկնածությունները քննարկվել են ինչպես անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնում, այնպես էլ մրցութային հանձնաժողովում և երաշխավորվել են հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

**Արտահայտվեցին** - պրոֆեսորներ Հ.Գ.Խաչատրյանը, Ռ.Ս.Հարությունյանը, Գ.Պ.Փիրումյանը կարծիք հայտնեցին Լ.Ռ.Հարությունյանի և Ա.Ի.Մարտիրյանի մասին: Ելույթ ունեցողները նշեցին, որ մրցույթի մասնակիցները փորձառու դասախոսներ և վաստակաշատ գիտնականներ են, ուսումնական գործընթացի լավ կազմակերպիչներ: Արժանի են ընտրվելու անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնում:

- Բաց քվեարկությամբ խորհուրդը միաձայն որոշեց մրցույթի մասնակիցներ Լ.Ռ.Հարությունյանին և Ա.Ի.Մարտիրյանին երաշխավորել անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու համար և նրանց անունները մտցնել փակ գաղտնի քվեարկության քվեաթերթի մեջ:

- Որոշեցին – Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրել հանձնաժողով հետևյալ կազմով.

Նախագահ - Ն.Ա.Դուրգարյան

Անդամներ- Ռ.Պ.Մխիթարյան, Շ.Վ.Վարդանյան

Ընտրություններից հետո ֆակուլտետի խորհուրդը (16-անդամներից ներկա էին 15-ը) լսեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել են խորհրդի 15 անդամներ: Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցնելու համար`

Ա.Ի.Մարտիրյանին կողմ քվեարկել են խորհրդի-11 անդամ, դեմ-4, անվավեր քվեաթերթ- չկա:

Լ.Ռ.Հարությունյանին կողմ քվեարկել են խորհրդի-4 անդամ, դեմ-11, անվավեր քվեաթերթ- չկա

Խորհուրդը բաց քվեարկությամբ որոշեց հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը և անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրված համարել քիմ. գիտ.թեկնածու, դոցենտ Ա.Ի.Մարտիրյանին:

**Նիստի նախագահ, պրոֆեսոր Տ.Վ.Ղուչիկյան**- Ընթացիկ հարցերի մեջ ունենք ևս մեկ հարց, որը վերբերվում է ԵՊՀ հրատարակչությունում տպագրված ուսումնական ձեռնարկներին: Աշխատանքների ներկայացվել են՝ «Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի» և «Անօրգանական և անալիտիկ քիմիայի» ամբիոնների կողմից և տպագրվել է 2017թ-ին: Սակայն համաձայն նոր տվյալների եթե ուսումնական ձեռնարկը բավարարում է այդ առարկային՝ դասավանդման ամբողջ տիրույթում, ապա համարվում են նաև դասախոսությունների շարք:

-Այսպիսով՝ «Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի» ամբիոնից Շ.Ա.Մարգարյանի և Կ.Ռ.Գրիգորյանի կողմից ներկայացված «Մոլեկուլային ֆլուորեսցենցիայի հիմունքները» ուսումնական ձեռնարկը կիրառվում է մագիստրատուրայում դասավանդվող 0604/Մ-16 դասիչով (6 ECTS կրեդիտ / 4ժամ/շաբ., դաս.-2/ գործ.-1/լաբ.-1) «Ֆլուորեսցենց մեթոդը կենսաբանական համակարգերում» առարկայի ժամանակ: Պարունակում է ինչպես տեսական այնպես էլ գործնական բաժիններ և կիրառվում է դասավանդման ամբողջ տիրույթում: «Անօրգանական և անալիտիկ քիմիայի» ամբիոնից Հ.Լ.Խաչատրյանի, Տ.Վ.Ղուչիկյանի, Ռ.Ս.Հարությունյանի կողմից ներկայացված «Ընդհանուր քիմիական տեխնոլոգիա» ուսումնական ձեռնարկը կիրառվում է բակալավրիատում դասավանդվող 0608/Բ-04: (6 ECTS կրեդիտ / 5ժամ /շաբ., դաս.-2/ գործ.-0/լաբ.-3) «Քիմիական տեխնոլոգիա» առարկայի ժամանակ:

Պարունակում է ինչպես տեսական այնպես էլ լաբորատոր բաժիններ և կիրառվում է դասավանդման ամբողջ տիրույթում:

Որոշեցին- Գիտական խորհուրդը միաձայն քվեարկությամբ որոշեց վերոհիշյալ երկու ուսումնական ձեռնարկները միաժամանակ հաստատել, որպես դասախոսությունների շարք:

Նիստի նախագահ,

քիմ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր

Նիստի քարտուղար

քիմ.գիտ.թեկնածու, դոցենտ

Տ.Վ.Ղուչիկյան

Մ.Ա.Սամվելյան